

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Տեխնոլոգիաների և անվտանգության գծով տնօրենի տեղակալ

..... Ա.Փիլոսյան

«28» նոյեմբերի 2022թ.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

**ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ**

ԵՐԵՎԱՆ
2022

Բովանդակություն

1. Ուղեցույցի մասին.....	3
2. Վճարային քարտի հիմնական վավերապայմաններ.....	3-5
3. Կասկածելի քարտեր.....	5
4. Վճարային քարտեր սպասարկելիս Գանձապահի գործողություններ.....	6-7
5. INGENICO POS տերմինալներով աշխատանքի կարգ.....	8-10
6. SUNMI POS տերմինալներով աշխատանքի կարգ.....	11-13
7. Հավաստագրման կոդերի աղյուսակ՝ Հավելված 1.....	14-15
8. Ստացական քարտի առգրավվման մասին՝ Հավելված 2.....	16


1. Ուղեցույցի մասին

Սույն ուղեցույցում ներկայացված է ARCA, MIR, VISA, Mastercard վճարային համակարգերի քարտերի սպասարկման համար անհրաժեշտ տեղեկությունը, հիմնական գործառնությունների նկարագրությունը և անվտանգության կանոնները, ինչպես նաև ցուցադրված է Ձեր առևտրի և սպասարկման կետում (ԱՍԿ) տեղադրված POS տերմինալի համապատասխան մոդելի շահագործման մանրամասն նկարագրությունը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) Ingenico և SunMi POS տերմինալները սպասարկում են մագնիսական ժապավենով և/կամ չիպային ARCA, MIR, VISA և Mastercard վճարային համակարգերի քարտերը (այդ թվում՝ VISA ELECTRON և Mastercard MAESTRO):

2. Վճարային քարտի հիմնական վավերապայմանները

Տարբեր բանկերի կողմից թողարկվող քարտեր ունենում են տարբեր արտաքին տեսք, սակայն այդ քարտերը ունեն պարտադիր վավերապայմաններ.



- Թողարկող բանկի անվանումը (1)
- Թողարկող բանկի անվանումը հանդիսանում է պարտադիր վավերապայմանը
- Լոգոտիպը (2)
- Հոլոգրամը (3)
- Քարտի համարը (4)
- Քարտի գործողության ժամկետը (5)
- Քարտապանի անուն ազգանունը (6)
- Ստորագրության դաշտը (7)
- CVV2 կոդը (8)
- Չիպը (9)
- Մագնիսական ժապավենը (10)

(2) Քարտի լոգոտիպը պետք է պատկերված լինի քարտի դիմային կողմում: Ստորև ներկայացված է լոգոտիպերը ըստ վճարային քարտերի տեսակների.

Mastercard վճարային համակարգի քարտ	
Mastercard վճարային համակարգի Maestro քարտ	
VISA վճարային համակարգի քարտ	
VISA վճարային համակարգի VISA ELECTRON քարտ	
ARCA վճարային համակարգի քարտ	
MIR վճարային համակարգի քարտ	

Հոլոգրամ (3)

- Mastercard վճարային համակարգի քարտերի վրա հոլոգրամը պատկերված է քարտի դիմերեսի աջ հատվածում, վճարային համակարգի լոգոտիպի վերևից կամ ներքևից, կամ քարտի հակառակ կողմում՝ ստորագրության համար նախատեսված ժապավենի կողքը կամ ներքևում (այս դեպքում առջևի կողմում հոլոգրամ չի տեղադրվում);
- Visa International վճարային համակարգի քարտերի վրա հոլոգրամը պատկերված է աղավնու տեսքով: Հոլոգրամը պետք է տեղակայված լինի քարտի դիմերեսի աջ հատվածում, վճարային համակարգի լոգոտիպի վերևից: Մինի հոլոգրամը Visa քարտերի վրա կարող է պատկերվել միայն քարտի հետևի կողմում՝ ձախ կամ աջ կողմում կամ ստորագրության համար նախատեսված ժապավենի տակ:

(4) Քարտի համարը բաղկացած է 16 նիշից, որոնք բաժանված են 4 խմբի: Հիշեք, որ խմբերի միջև տարածությունը պետք է լինի հավասարաչափ:

(5) Քարտի գործողության ժամկետը պատկերվում է ամիս/տարի (MM/YY) ֆորմատով: Քարտը գործում է մինչև քարտի վրա նշված տարվա համապատասխան ամսվա վերջին օրացուցային օրը ներառյալ:

Ժամկետանց քարտերը չեն սպասարկվում. այս դեպքում քարտապանը պետք է դիմի թողարկող բանկին:

(6) Քարտապանի անուն, ազգանունը պատկերված է լինում լատինատառ և սովորաբար տպված է քարտի ներքևի մասում: Business քարտերի վրա քարտապանի անուն, ազգանունի առկայությունը պարտադիր չէ:

(7) Ստորագրության դաշտում քարտապանի ստորագրությունը պարտադիր է: Ստորագրության բացակայության դեպքում քարտը սպասարկվում է միայն անձնագրի ներկայացմամբ (ստուգվում է քարտի տվյալները անձնագրի հետ, քարտապանը ստորագրում է քարտի վրա ինչպես անձնագրում, այնուհետև միայն քարտը ընդունվում է սպասարկման): Ստորագրության դաշտում թույլ չեն տրվում ստորագրության ուղղումներ և ջնջումներ:

(8) CVV2 կոդ՝ եռանիշ թիվ է, որը պատկերված է ստորագրության դաշտում կամ դրան հաջորդող սպիտակ դաշտում:

(9) Չիպ՝ քարտում ներկառուցված միկրոպրոցեսորն է, որը պարունակում է տեղեկատվություն քարտի և քարտապանի մասին: Տերմինալով սպասարկման ժամանակ նախապատվությունը տրվում է չիպին՝ POS տերմինալի վրա տեղադրված հատուկ չիպ քարտերի համար նախատեսված ընդունիչ սարքի միջոցով: Այդ դեպքում մագնիսական ժապավենի միջոցով գործարքներ չեն կատարվում:

Չիպային քարտերով գործարքները իրականացվում են 2 եղանակով.

- PIN կոդի մուտքագրմամբ, եթե տերմինալի էկրանին հայտնվում է մուտքագրել PIN (ENTER PIN) հաղորդագրությունը, ապա հաճախորդը պարտավոր է մուտքագրել PIN կոդը և այդ դեպքում անդորրագրի վրա ստորագրությունը պարտադիր չէ,

- Առանց PIN կոդի մուտքագրման, եթե գործարքի ընթացքում տերմինալի էկրանին չի հայտնվել PIN կոդի մուտքագրման պահանջ և գործարքը բարեհաջող ավարտվել է, ապա անդորրագրի վրա ստորագրությունը պարտադիր է:

(10) Մագնիսական ժապավենը չպետք է լինի վնասված (քերծված, ծակված և չափից շատ մաշված):

3. Կասկածելի քարտեր

Եթե վճարային քարտը չի համապատասխանում վճարային քարտի հիմնական վավերապայմաններին, ապա ԱՍԿ աշխատակիցը պարտավոր է կապ հաստատել Բանկի համապատասխան աշխատակցի հետ՝ հետագա հրահանգների համար: Կեղծ կամ գողացած քարտերի հայտնաբերման համար շատ կարևոր է ուշադրություն դարձնել նաև քարտ ներկայացնողի վարքագծին: Տվյալ վարքագիծը կարող է դրսևորվել ներքոնշյալ հատկանիշներով.

- անտարբերություն գնվող ապրանքների գնի, որակի, չափի, քանակի և տեսականու նկատմամբ, այլ հիմք է ընդունվում միայն ապրանքի բարձր արժեքը և հետագայում հեշտությամբ իրացնելու հնարավորությունը,
- նյարդային պահվածք, երբ գանձապահը ցուցաբերում է քարտի իսկության վերաբերյալ հետաքրքրություն, ուշադիր զննում է քարտը և այլն: Քարտապանը փորձում է հոգեբանական ճնշում գործադրել գանձապահի վրա, շփոթեցնել նրան,
- վճարում կատարելու ընթացքում ԱՄԿ-ի աշխատակցին շտապեցնում է, շեղում է ուշադրությունը,
- գնվող ապրանքների գումարի այնպիսի ընտրություն, որպեսզի կարողանա շրջանցել PIN կոդի կիրառման պարտադիր պահանջը,
- քարտապանի ուղեկիցները փորձում են շեղել գանձապահին,
- գնումներ կատարելուց հետո նորից վերադառնում են ևս մի քանի գործարք կատարելու համար:

4. Վճարային քարտեր սպասարկելիս Գանձապահի գործողությունները

4.1 Վճարային քարտի սկզբնական ստուգում.

Քարտը սպասարկող աշխատակիցը քարտապանից վերցնում է քարտը

- ստուգում է քարտի արտաքին վնասվածքները,
- կտրվածքների առկայությունը և քարտի ծովածության չափը,
- չիպի և/կամ մագնիսական ժապավենի մեխանիկական վնասվածքը,
- ուղղումների առկայությունը քարտապանի ստորագրության վրա ,
- կեղծիքների առկայությունը թվերում և տառերում (թվերը պետք է լինեն ձեռքով շրջափելի, թվերի միջև եղած հեռավորությունը լինի նույն չափի)

Վերոհիշյալ վնասվածքների առկայության դեպքում քարտը չի սպասարկվում

- համոզվում է, որ քարտը համապատասխանում է քարտի վրա նշված վճարային համակարգի ստանդարտներին: Քարտը, որը չի համապատասխանում վճարային համակարգի ստանդարտներին, համարվում է անվավեր և չի սպասարկվում:
- ստուգում է քարտի գործողության ժամկետը:

4.2 Անդորրագրի տվյալների ստուգում քարտի տվյալների հետ.

Անդորրագրի վրա պատկերվում է 3 տեսակի տեղեկատվություն՝

- սպասարկման կետի վերաբերյալ,
- քարտապանի և քարտի վերաբերյալ,
- գործարքի հավաստագրման վերաբերյալ:

Սպասարկման կետի վերաբերյալ տեղեկատվությունը պարունակում է տերմինալի նույնականացման համարը՝ ID (տերմինալի գրանցված համարը բանկում), սպասարկման կետի նույնականացման համարը (ID), անվանումը, հասցեն և հեռախոսը:

Քարտապանի և քարտի վերաբերյալ տեղեկատվությունը պարունակում է քարտի համարը, քարտապանի անուն ազգանունը, քարտի գործողության ժամկետը:

Գործարքի հավաստագրման վերաբերյալ տեղեկատվությունը պարունակում է անդորրագրի համարը, գործարքի գումարը, հավաստագրման կոդը (Հավաստագրման կոդերի աղյուսակը ներկայացված է Հավելված 1-ում), response կոդը և reference կոդը:

Գանձապահը պարտավոր է մանրամասն ստուգել և համեմատել քարտի վրա պատկերված քարտապանի անուն ազգանունը, քարտի համարը և գործողության ժամկետը անդորրագրի վրա պատկերված քարտապանի անուն ազգանվան, քարտի համարի և գործողության ժամկետի հետ: Հայտնաբերված անհամապատասխանությունների դեպքում անհրաժեշտ է անվավեր ճանաչել գործառնությունը և Հաճախորդին չտրամադրել ապրանքը կամ չմատուցել ծառայությունը:

4.3 Գանձապահը քարտապանի կասկածելի վարքագծի, չարամիտ և կանխամտածված գործողությունների դեպքում ինչպես նաև վնասված քարտի պարագայում իրավունք ունի չսպասարկելու հաճախորդին:

4.4 Գանձապահը պարտավոր է կատարել գործարքի անվավեր ճանաչման (CANCEL) հավաստագրումը, Քարտապանի կողմից գրավոր կամ բանավոր պահանջի դեպքում և անհապաղ տեղեկացնել այդ մասին Բանկին:

4.5 Քարտով վճարում կատարելիս.

- մագնիսական ժապավենի կիրառմամբ POS տերմինալով կատարվող գործարքի ժամանակ հաճախորդը պարտադիր ստորագրում է POS տերմինալից տպված անդորրագրի վրա (և՛ PIN-ով վավերացված գործարքների, և՛ առանց PIN-ի գործարքների համար): Հաճախորդը պետք է ստորագրի երկու տպված անդորրագրերից մեկը վրա: Գանձապահը պարտավոր է համեմատել անդորրագրի և քարտի ետևի կողմի վրա առկա ստորագրությունները: Եթե ստորագրությունները չեն համապատասխանում, գանձապահը պետք է տալի անդորրագրի պատճենը (տես «ԱՆԴՈՐՐԱԳՐԻ ՊԱՏՃԵԻ ԿԱՄ ՎԵՐՋԻՆ ԿՏՐՈՆԻ ՏՊՈՒՄ» հրահանգը POS տերմինալների աշխատանքի կարգում) և հաճախորդին խնդրի կրկին ստորագրել այն: Ստորագրությունների երկրորդ անհամապատասխանության դեպքում գանձապահը պետք է մերժի հաճախորդին և կատարի «Անվավեր» գործարքը:
- չիպային կրիչի կիրառմամբ POS տերմինալով կատարվող գործարքի ժամանակ, եթե գործարքը վավերացվել է PIN-ով, ապա POS տերմինալից տպված անդորրագրում անհրաժեշտ չէ հաճախորդի ստորագրությունը, իսկ եթե գործարքը իրականացվում է առանց PIN կոդի կիրառման՝ անդորրագրում հաճախորդի ստորագրությունը պարտադիր է:
- Contactless (անհպում) ֆունկցիոնալով գործարքներ իրականացնելիս մինչև 20,000 ՀՀ դրամ գործարք իրականացնելիս հնարավոր է չպահանջվի PIN կոդի մուտքագրումը:

4.6 Գանձապահը քարտապանի քարտի վրա ստորագրության բացակայության, ինչպես նաև քարտապանի կասկածելի վարքագծի դեպքում պարտավոր է պահանջել անձը հաստատող փաստաթուղթ, այլ դեպքում քարտը չի սպասարկվում:

4.7 «Առգրավել քարտը» հավաստագրման ժամանակ (տես Հավելված 1-ը) գանձապահին անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այն կողերին, որոնցում նշված է «Առգրավել քարտը» հաղորդագրությունը: Տեսնելով այդ հաղորդագրությունը պետք է առգրավել քարտը և, լրացնելով քարտի առգրավման ստացականը (համաձայն Հավելված 2-ի), տեղեկացնել Բանկին: Եթե քարտի առգրավումը սպառնում է Ձեր անվտանգությանը, խնդրում ենք չառգրավել այն:

4.8 Հիշեք, որ անդորրագրի վրա **000** հավաստագրման կոդից բացի մնացած կոդերը նշանակում են, որ գործարքը մերժված է: Անհրաժեշտ է գտնել տվյալ կոդը հավաստագրման կոդերի աղյուսակում և պատասխանել հաճախորդին:

5. INGENICO POS տերմինալներով աշխատանքի կարգ

	ՎԱՃԱՌՔ/ SALE	ԱՆՎԱՎԵՐ/ CANCEL	ՀԵՏՎՃԱՐ/ REFUND	ՆԱԽԱՀԱՎԱՍՏԱ- ԳՐՈՒՄ/ ՆԱԽԱՀԱՎԱՍՏԱ- ԳՐՄԱՆ ԱՎԱՐՏ	
Ոչ չիպային քարտ 	Ոչ չիպային քարտի դեպքում հաճախորդի քարտն անցկացրեք մագնիսական ընթերցիչով (քարտի մագնիսական ժապավենը պետք է ուղղված լինի ներքև և դեպի տերմինալը): Մուտքագրեք քարտի վերջին 4 նիշը (հարցման դեպքում)				
Չիպային քարտ 	Չիպային քարտի դեպքում քարտի ընթերցման համար օգտագործեք չիպի ընթերցիչ:				
Անհայում (contactless) քարտ 	Անհայում (contactless) քարտի դեպքում քարտը անհրաժեշտ է մոտեցնել  (contactless) նշանին				

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆ՝	Ընտրեք ՎԱՃԱՌՔ/(SALE) գործառնությունը և սեղմեք Կանաչ (ENTER) կոճակը	Ընտրեք ԱՆՎԱՎԵՐ/ CANCEL գործառնությունը և սեղմեք Կանաչ (ENTER) կոճակը	Ընտրեք ՀԵՏՎՃԱՐ/ REFUND գործառնությունը՝ մուտքագրեք Ավագ Գանձապահի գաղտնաբառը (տրվում է բանկի կողմից) և սեղմեք Կանաչ (ENTER) կոճակը	Ընտրեք «ՆԱԽԱՀԱՎԱՍՏԱ- ԳՐՈՒՄ» գործառնությունը և սեղմեք Կանաչ (ENTER) կոճակը	Ընտրեք «ՆԱԽԱՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԱՎԱՐՏ» գործառնությունը և սեղմեք Կանաչ (ENTER) կոճակը
ՎԱՃԱՌՔ/(SALE) ԱՆՎԱՎԵՐ/CANCEL ՀԵՏՎՃԱՐ/REFUND ՆԱԽԱՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ ՆԱԽԱՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԱՎԱՐՏ					
ԿՏՐՈՆԻ ՀԱՄԱՐԸ	-	Մուտքագրեք չեղարկվող գործառնության կտրոնի համարը	Մուտքագրեք վերադարձվող գործառնության կտրոնի համարը	-	Մուտքագրեք նախահավաստագրման գործառնության կտրոնի համարը
ՀՂՈՒՄ՝	-	Մուտքագրեք այն գործառնության հղման 12 նիշանոց համարը (RRN)-ը, որի համար իրականացվում է ներկա գործառնությունը	Մուտքագրեք այն գործառնության հղման 12 նիշանոց համարը (RRN)-ը, որի համար իրականացվում է ներկա գործառնությունը	-	Մուտքագրեք այն գործառնության հղման 12 նիշանոց համարը (RRN)-ը, որի համար իրականացվում է ներկա գործառնությունը
ԳՈՐԾԱՐՔԻ ԳՈՒՄԱՐԸ՝ 0.00 AMD	Մուտքագրեք գործառնության գումարը (գումարի մուտքագրումը կատարվում է լումաներով, կետին հաջորդում են լումաները)	-	Մուտքագրեք վերադարձվող գումարը (նշված գումարը չի կարող գերազանցել գործարքի գումարին, մուտքագրումը կատարվում է լումաներով, կետին հաջորդում են լումաները)	Մուտքագրեք գործառնության գումարը (գումարի մուտքագրումը կատարվում է լումաներով, կետին հաջորդում են լումաները):	Մուտքագրեք գործառնության վերջնական գումարը (գումարի մուտքագրումը կատարվում է լումաներով, կետին հաջորդում են լումաները):
ՄՈՒՏՔԱԳՐԵՔ PIN կոդը՝	Առաջարկեք հաճախորդին մուտքագրել PIN ծածկագիրը (հարցման դեպքում):			Առաջարկեք հաճախորդին մուտքագրել PIN ծածկագիրը (հարցման դեպքում):	

ԿՏՐՈՆԸ ՀԱՆՁՆԵՔ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ	Հաջող գործառնության դեպքում հաճախորդի համար տպվում է կտրոնի առաջին օրինակը՝ «ՎԱՃԱՌՔ Հաստատված է» հաղորդագրությամբ (RESPONSE CODE -00 կամ Կողք -000) <u>Գործարքը ՀԱՍՏԱՏՎԱԾ է</u>: Ցանկացած կոճակի սեղմման արդյունքում ԱՍԿ-ի համար տպվում է կտրոնի երկրորդ օրինակը:	Հաջող գործառնության դեպքում հաճախորդի համար տպվում է կտրոնի առաջին օրինակը՝ «ԱՆՎԱՎԵՐ Հաստատված է» հաղորդագրությամբ: Ցանկացած կոճակի սեղմման արդյունքում ԱՍԿ-ի համար տպվում է երկրորդ օրինակը:	Հաջող գործառնության դեպքում հաճախորդի համար տպվում է կտրոնի առաջին օրինակը՝ «ՀԵՏՎՃԱՐ Հաստատված է » հաղորդագրությամբ: Ցանկացած կոճակի սեղմման արդյունքում ԱՍԿ-ի համար տպվում է երկրորդ օրինակը:	Հաջող գործառնության դեպքում հաճախորդի համար տպվում է կտրոնի առաջին օրինակը՝ «ՆԱԽԱՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄՆ Հաստատված է» հաղորդագրությամբ: Հաճախորդի կողմից PIN ծածկագրի մուտքագրման դեպքում ցանկացած կոճակի սեղմման արդյունքում ԱՍԿ-ի համար տպվում է կտրոնի երկրորդ օրինակը:	Հաջող գործառնության դեպքում հաճախորդի համար տպվում է կտրոնի առաջին օրինակը՝ «ՆԱԽԱՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄՆ ԱՎԱՐՏՆ Հաստատված է» հաղորդագրությամբ: Ցանկացած կոճակի սեղմման արդյունքում ԱՍԿ-ի համար տպվում է կտրոնի երկրորդ օրինակը:
ԱՆԴՈՐՐԱԳՐԻ ՊԱՏՃԵԻ ԿԱՄ ՎԵՐՋԻՆ ԿՏՐՈՆԻ ՏՊՈՒՄ	Սեղմել ☒ կոճակը, բացված ցանկում ընտրել «ՎԵՐՋԻՆ ԿՏՐՈՆ» կամ «ՀԱՄԱՐԻ ԿՏՐՈՆ» տարբերակը, այնուհետև սեղմել Կանաչ (ENTER) կոճակը				

6. SUNMI POS տերմինալներով աշխատանքի կարգ

	ՎԱՃԱՌՔ/SALE	ԱՆՎԱՎԵՐ/CANCEL	ՀԵՏՎՃԱՐ/REFUND	ՆԱԽԱՀԱՎԱՍՏԱ- ԳՐՈՒՄ	ՆԱԽԱՀԱՎԱՍՏԱ- ԳՐՄԱՆ ԱՎԱՐՏ
	Բացեք PANDAPOS հավելվածը				
	Ընտրել PosCashier տարբերակը, մուտքագրել գաղտնաբառը, սեղմել LOGIN կոճակը	Ընտրել SeniorCashier տարբերակը, մուտքագրել գաղտնաբառը, սեղմել LOGIN կոճակը			
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆ՝	Ընտրեք Վաճառք գործառնությունը	Ընտրեք «ԱՆՎԱՎԵՐ» գործառնությունը	Ընտրեք «ՀԵՏՎՃԱՐ» գործառնությունը	Ընտրեք «ՆԱԽԱՀԱՎԱՍՏԱ-ԳՐՈՒՄ»	Ընտրեք «ՆԱԽԱՀԱՎԱՍՏԱ-ԳՐՄԱՆ ԱՎԱՐՏ»
ՎԱՃԱՌՔ/(SALE) ԱՆՎԱՎԵՐ/CANCEL ՀԵՏՎՃԱՐ/REFUND ՆԱԽԱՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ ՆԱԽԱՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԱՎԱՐՏ					
ԿՏՐՈՆԻ ՀԱՄԱՐԸ	-	Մուտքագրեք չեղարկվող գործառնության կտրոնի համարը	-	-	Մուտքագրեք նախահավաստագրման գործառնության կտրոնի համարը
ՀՂՈՒՄ՝	-		Մուտքագրեք այն գործառնության հղման 12 նիշանոց համարը(RRN)-ը, որի համար իրականացվում է ներկա գործառնությունը	-	Մուտքագրեք այն գործառնության հղման 12 նիշանոց համարը(RRN)-ը, որի համար իրականացվում է ներկա գործառնությունը
ԳՈՐԾԱՐՔԻ ԳՈՒՄԱՐԸ՝	Մուտքագրեք գործառնության գումարը	-	Մուտքագրեք վերադարձվող գումարը	Մուտքագրեք գործառնության	Մուտքագրեք գործառնության

0.00 AMD	(գումարի մուտքագրումը կատարվում է լումաներով, կետին հաջորդում են լումաները) և սեղմեք կոճակը		(նշված գումարը չի կարող գերազանցել գործարքի գումարին, մուտքագրումը կատարվում է լումաներով, կետին հաջորդում են լումաները) և սեղմեք կոճակը	գումարը (գումարի մուտքագրումը կատարվում է լումաներով, կետին հաջորդում են լումաները) և սեղմեք կոճակը	վերջնական գումարը (գումարի մուտքագրումը կատարվում է լումաներով, կետին հաջորդում են լումաները) և սեղմեք կոճակը:
Ոչ չիպային քարտ 	Ոչ չիպային քարտի դեպքում հաճախորդի քարտն անցկացրեք մագնիսական ընթերցիչով (քարտի մագնիսական ժապավենը պետք է ուղղված լինի ներքև դեպի էկրան՝ համաձայն լուսանկարի): Մուտքագրեք քարտի վերջին 4 նիշը (հարցման դեպքում)				
Չիպային քարտ 	Չիպային քարտի դեպքում քարտի ընթերցման համար օգտագործեք չիպի ընթերցիչ: (համաձայն լուսանկարի)				
Անհպում (contactless) քարտ	Անհպում (contactless) քարտի դեպքում քարտը անհրաժեշտ է մոտեցնել  (contactless) նշանին				

					
ՄՈՒՏՔԱԳՐԵՔ PIN կոդը՝	Առաջարկեք հաճախորդին մուտքագրել PIN ծածկագիրը (հարցման դեպքում) և սեղմեք CONFIRM կոճակը		Առաջարկեք հաճախորդին մուտքագրել PIN ծածկագիրը (հարցման դեպքում) և սեղմեք CONFIRM կոճակը	Առաջարկեք հաճախորդին մուտքագրել PIN ծածկագիրը (հարցման դեպքում) և սեղմեք CONFIRM կոճակը	
ԿՏՐՈՆԸ ՀԱՆՁՆԵՔ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ	Հաջող գործառնության դեպքում հաճախորդի համար տպվում է կտրոնի օրինակը՝ «ՎԱՃԱՌՔ Հաստատված է» հաղորդագրությամբ <u>(RESPONSE CODE -00 կամ Կոդը -000:</u> Հաճախորդի օրինակը տպելու համար սեղմել «ԱՅՈ» կոճակը	Հաջող գործառնության դեպքում հաճախորդի համար տպվում է կտրոնի օրինակը՝ «ԱՆՎԱՎԵՐ Հաստատված է» հաղորդագրությամբ: Հաճախորդի օրինակը տպելու համար սեղմել «ԱՅՈ» կոճակը	Հաջող գործառնության դեպքում հաճախորդի համար տպվում է կտրոնի առաջին օրինակը՝ «ՀԵՏՎՃԱՐ Հաստատված է» հաղորդագրությամբ: Հաճախորդի օրինակը տպելու համար սեղմել «ԱՅՈ» կոճակը:	Հաջող գործառնության դեպքում հաճախորդի համար տպվում է կտրոնի առաջին օրինակը՝ «ՆԱԽԱՀԱՎԱՍՏԱԳՐՈՒ ԻՄՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ Է» հաղորդագրությամբ: Հաճախորդի օրինակը տպելու համար սեղմել «ԱՅՈ» կոճակը:	Հաջող գործառնության դեպքում հաճախորդի համար տպվում է կտրոնի առաջին օրինակը՝ «ՆԱԽԱՀԱՎԱՍՏԱԳՐՄ ԱՆ ԱՎԱՐՏՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ Է» հաղորդագրությամբ: Հաճախորդի օրինակը տպելու համար սեղմել «ԱՅՈ» կոճակը:
ԱՆԴՈՐՐԱԳՐԻ ՊԱՏՃԵԻ ԿԱՄ ՎԵՐՋԻՆ ԿՏՐՈՆԻ ՏՊՈՒՄ	Մուտք գործել հաշվետվություն դաշտը, բացված ցանկում ընտրել «ՎԵՐՋԻՆ ԿՏՐՈՆ» կամ «ՀԱՄԱՐԻ ԿՏՐՈՆ» տարբերակը,  այնուհետև սեղմել տպելու նշանը				

Հավաստագրման կոդերի աղյուսակ

ԿՈԴ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
000	APPROVED:	Հավաստագրված է
903	RE-ENTER TRANS.	Կրկնել Գործարքը
910	HOST NOT AVAIL.	Հավաստագրողը անհասանելի է
103	CALL ISSUER	Զանգել Թողարկող Բանկ
120	NOT ALLOWED	չի թույլատրվում
909	CALL ISSUER	Զանգել Թողարկող Բանկ
119	SECURITY VIOLATION	Անվտանգության
903	RE-ENTER TRANS.	Կրկնել Գործարքը
913	INVALID TRANS	Անվավեր Գործարք
904	FORMAT ERROR	Սխալ ֆորմատ
095	RECONCILIATION ERROR	Փաթեթի ուղարման սխալ
123	EXCDS WDRWL LTMT	Օրվա գործարքների լիմիտի գերեզանցում
204	PICK-UP CARD	Առգրավել քարտը
101	EXPIRED CARD	Ժանկետանց քարտ
106	PIN-TRIES EXCEED	PIN կոդի փորցերի գերազանցում
106	PIN-TRIES EXCEED	PIN կոդի փորցերի գերազանցում
208	PICK-UP CARD	Առգրավել քարտը
209	PICK-UP CARD	Առգրավել քարտը
203	PICK-UP CARD	Առգրավել քարտը
001	HONR W/ID	ՍԻՍԱԼ
100	CARD DECLINED	Քարտը մերժված է
202	INVALID CARD	Անվավեր քարտ
103	BAD ISSUE DATE	Թողարկողի
920	PIN ERROR	PIN կոդի սխալ
907	HOST NOT AVAIL	Հավաստագրողը անհասանելի է
940	CAPTURE CARD SPEC	Առգրավել քարտը(Հատուկ պայմ.)
121	REQ AMOUNT RANGE	Սխալ
101	DATES UNEQUAL	Քարտի ժամկետը չի համապատասխ.
202	INVALID CARD	Անվավեր քարտ
111	INVALID CARD	Անվավեր քարտ
117	INCORRECT PIN	Սխալ PIN Կոդ
005	UNABLE TO PROCESS	Հնարավոր չէ շարունակել գործ.
110	INVALID AMOUNT	Սխալ Գումար
206	DENY PIN CAPTURE	PIN կոդի սխալ, առգրավել
125	INVALID CARD	Անվավեր քարտ
101	EXPIRED CARD	Ժանկետանց քարտ
111	INVALID CARD	Անվավեր քարտ
101	EXPIRED CARD	Ժանկետանց քարտ
200	INVALID CARD	Անվավեր քարտ
902	INVALID TRANS	Անվավեր Տրանզակցիա
903	RE-ENTER TRANS.	Կրկնել գործարքը

903	RE-ENTER TRANS.	Կրկնեք գործարքը
902	INVALID TRANS	Սխալ հավաստագրում
902	RE-ENTER TRANS.	Կրկնեք գործարքը
116	INSUFFICIENT FUNDS	Անբավարար Միջոցներ
120	SECURITY VIOLATN	Անվտանգության խախտում
123	EXCDS WDRWL LIMT	Սահմանաչափի գերազանցում
111	INVALID CARD	Անվավեր քարտ
104	CARD DECLINED	Քարտը մերժված է
914	ORIG TRANS NOT FOUND	Օրիգինալ գործարք չի գտնվել
111	NO CHECKING ACCT.	քարտային հաշվի բացակայություն
111	NO CARD RECORD	քարտային տվյալները բացակա են
100	WORM CARD	Խնդրահարույց քարտ
121	EXCDS WDRWL LIMT	Սահմանաչափի գերազանցում
914	ORIG TRANS NOT FOUND	Իրական գործարքը չի գտնվել
109	INVALID MERCHANT	Անվավեր Ա.Ս.Կ
109	INVALID MERCHANT	Անվավեր Ա.Ս.Կ.
109	INVALID TERMINAL	Անվավեր Տերմինալ
107	CALL ISSUER	Զանգել Թողարկող Բանկ
902	INVALID TRANS.	Անվավեր Տրանզակցիա
104	CAPTURE CARD SPEC	Առգրավել քարտը(Հատուկ պայմ.)
111	INVALID CARD	Անվավեր քարտ
909	INVALID TRANS.	Անվավեր Տրանզակցիա
204	PICK-UP CARD	Առգրավել քարտը

Չիպային կրիչով քարտերի համար առկա են նաև լրացուցիչ հավաստագրման կոդեր

Y1	Offline approved-գործարքը հաստատված է առանց հավաստագրման
Z1	Offline declined- գործարքը մերժված է առանց հավաստագրման
Y2	Approval(after card-initiated referral)- գործարքը հաստատված է թողարկող Բանկի հետ կապնվելուց հետո
Z2	Decline (after card-initiated referral) - գործարքը մերժված է թողարկող Բանկի հետ կապնվելուց հետո
Y3	Unable to go online, offline approved - հնարավոր չէ միանալ առցանց համակարգին, գործարքը ընդունված է առանց կապի
N7	CVV2-կոդի սխալ մուտքագրում
Z3	Unable to go online, offline declined - հնարավոր չէ միանալ առցանց համակարգին, գործարքը մերժված է առանց կապի

**Ստացական
քարտի առգրավման մասին**

Քարտի համար՝ _____

Քարտապանի անուն, ազգանունը՝ _____

Քարտը թողարկող բանկի անվանումը՝ _____

Քարտի ներկայացնողի անուն, ազգանունը՝ _____

Սպասարկման կետի անվանումը՝ _____

Քարտի առգրավման ամսաթիվը՝ _____

Քարտի առգրավման պատճառը՝ _____

Սպասարկող անձ՝ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հարցերի, խնդիրների դեպքում կամ այլ անհրաժեշտ տեղեկությունը ստանալու համար կարող եք զանգահարել ներքոնշյալ հեռախոսահամարներով.

+374-10-510-910 (ներքին 9321)

POS տերմինալների տեղադրման, սպասարկման և ներգրավման բաժնի հերթապահ համար

+374-99-01-28-76 (նաև WhatsApp & Viber)

կամ դիմել techcard@aeb.am էլեկտրոնային փոստով: